ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն **13.12.2014**

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն/

Հայաստանի Սոցիալական Նեղրումների Հիմնադրամ

Ծրագրի անվանումը: Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրի ղեկավար ձեռնարկի մշակում

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ SDC-07

Հայաստանի սոցիալական նեղրումների հիմնադրամ (ՀՄՆՀ) ստացել է դրամաշնորհ Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալությունից (ՇԶՀԳ) և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը Խորհրդատվական Ծառայությունների՝ Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրի ղեկավար ձեռնարկի մշակման համար:

Առաջադրանքի նպատակը. Սույն հանձնարարության հիմնական նպատակը ՀՄՆՀ-ի նոր Ծրագրի՝ ՄՆՏԶ-ի Ղեկավար ձեռնարկի մշակումն է: Այն հիմնվելու է ՀՄՆՀ-3 ծրագրի Ղեկավար ձեռնարկի վրա, ընդգրկելով նոր ՄՆՏԶ ծրագրի նախագծմանը համահունչ համապատասխան թարմացումները:

Խորհրդատուն պետք է՝

ա. ՄՆՏԶ ծրագրի 1-ին բաղադրիչի շրջանակներում՝ Սոցիալական ենթակառուցվածքային ծրագրերի մասով. ՀՄՆՀ-ի ներկա Ծրագրի Ղեկավար ձեռնարկը լրամշակիև արդիականացնիծրագրերի թիրախավորման, առաջարկների գեներացման (ընդգրկելով ՀՄՆՀ-ի անցյալ ներդրումների կենսունակությանը վերաբերվող ասպեկտները), ծրագրերի ընտրության, հաստատման, գնումների և իրականացման հիմնադրույթները, համայնքների և տեղական իշխանությունների մասնակցությունը, ներառել շեմային և արժեքային փոփոխությունները, վերանայել ընթացակարգերը,

բ. ՄՆՏԶ-ի 2-րդ բաղադրիչի շրջանակներում՝ Զարգացման ծրագրերի մասով. մշակի զարգացման ծրագրերի իրականացման ամբողջ ցիկլը՝ ընդգրկելով նման ծրագրերի առաջարկների գեներացումը, դրանց հետազոտումը բնապահպանական և սոցիալական տեսանկյուններից և դասակարգումը, փորձաքննությունը և հաստատումը, մանրամասնորեն նկարագրել իրականացման ցիկլի բոլոր փուլերը՝ նշելով հիմնական դերակատարներին և նրանց վերապահված գործառույթները, հաջորդաբար նկարագրել իրականացման ուղղությամբ աշխատանքների փոխկապակցված ընթացակարգերն ըստ փուլերի և ենթափուլերի, յուրաքանչյուր հատվածի համար ընթացակարգային և հաշվետվական փաստաթղթային ձևերի, ինչպես նաև կողմերի պատասխանատվությունների ու իրավունքների ներկայացմամբ

գ. ՄՆՏԶ-ի 3-րդ բաղադրիչի շրջանակներում. նկարագրի ՀՄՆՀ-ի՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի վերափոխվելու փուլերն ու ընթացակարգերը, վերանայել ՀՄՆՀ-ի կազմակերպչական կառուցվածքը, ընդգրկելով բոլոր այն բաժիններն ու ստորաբաժանումները, որոնք անհրաժեշտ են հիմնադրամի գործունեության երկրորդ բաղադրիչի՝ զարգացման ծրագրերի մասով, նկարագրել գրասենյակի բաժինների աշխատանքը, տալ դրանց գործունեության հետ կապված փաստաթղթային ներքին շրջանառության սխեման, ընդգրկել աշխատակազմի աշխատանքային պարտականությունների նկարագրու-թյունը, սահմանել ՀՄՆՀ-ի գործադիր կոմիտեի և խորհրդի գործունեության շրջանակները,

դ. Ղեկավար ձեռնարկը համալրի կառավարման տեղեկատվական համակարգին առնչվող դրույթներով, վերանայելով և թարմացնելով այն նոր ծրագրի ցիկլի պահանջների համեմատ,

ե. մշակի մոնիտորինգի և գնահատման համակարգը՝ ներառյալ ծրագրի և ենթածրագրերի կատարման ցուցանիշների նկարագրությունը (պլան-մեկնարկ- ընթացք-արդյունք),

զ. մանրամասնի ծրագրի առաջընթացային հաշվետվություն-ներին ներկայացվող պարտականությունները և պահանջները, ներառյալ ՀԲ-ին ներկայացվելիք առաջընթացային հաշվետվությունների բովանդակությունը և ներկայացման հաճախականությունը (ինչպես մանրամասնված է ծրագրի վարկային համաձայնագրում),

է. հանգամանորեն ներկայացնի ծրագրի՝ բնապահպանական և սոցիալական անվտանգության պահանջները, ներառյալ՝ i. ՀԲ-ի գործող/triggered անվտանգության պահանջները, ii. համապատասխան անվտանգության շրջանակին առնչվող մշակված փաստաթղթերի թվարկումը, iii. բացատրել, թե ենթածրագրերին հատուկ պաշտպանական փաստաթղթերը ինչպես պետք է մշակվեն, հրապարակվեն/բացահայտվեն, քննարկվեն ծրագրից տուժած համայնքներում և ավարտուն տեսքի բերվեն, iv. նկարագրել ենթածրագրերի պլանավորման, ձեռնարկման և իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բնապահպանական վերահսկման հաշվետվությունների ներկայացման համակարգը,

ը. Մանրամասն նկարագրի ՄՆՏԶ ծրագրի ներքո ընդունված միջոցառումները, կապված գենդերային զգայունության և քաղաքացիների ներգրավման հետ, ներառյալ հանրային խորհրդակցություններ

թ. նկարագրի բողոքարկման մեխանիզմը

ժ. հանգամանորեն նկարագրի ծրագրի հաղորդակցության ռազմավարությունն ու ընթացակարգերը

ի. լրամշակի և արդիականացնի Ղեկավար ձեռնարկի բոլոր հավելվածները, մշակի նոր պահանջվող հավելվածները:

Առաջադրանքի տևողությունը 120 օր:

Շահագրգիռ խորհրդատուները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկություններ, որոնք ցույց կտան, որ իրենք ունեն պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար:

Ընտրության չափանիշներն են.

- ☐ Մասնագիտական որակավորում տնտեսագիտության, բնագիտության, տեխնիկական գիտությունների կամ կառավարման ոլորտում ,
- ☐ Հաստատված փորձառություն մասնակցային, համայնքային մակարդակի ծրագրերի համար գործառնական ձեռնարկների/ ընթացակարգային ձեռնարկների մշակման ոլորտում: Միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերին առնչվող փորձը գերադասելի է: Բոլոր թեկնածուները պետք է ներկայացնեն նախորդ փորձառության մանրամասն ցանկ և հղում կատարեն յուրաքանչյուրի տեղեկանքի աղբյուրի վերաբերյալ.
- ☐ Աշխատանքային փորձ մասնակցային հիմունքներով և համայնքային զարգացման ծրագրերում.
- ☐ Հայերենի և անգլերենի սահուն իմացություն:

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-իփոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011» («Խորհրդատուների Ուղեցույցներ» (Guidelines: Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011)), 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի (Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers (January, 2011) բաժին V-ում սահմանված Անհատ խորհրդատուների ընտրության ընթացակարգերին համաձայն:

Շահագրգիռ հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ ՀՄՆՀ գրասենյակից Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ, Ձեռքբերումների բաժին, աշխատանքային օրերին ժ. 10:00-ից մինչև ժ.17:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն առձեռն կամ էլ-փոստով ստորև ներկայացվող հասցեով , ոչ ուշ քան 2014 թ. դեկտեմբերի 25-ը, ժամը 17:00-ը:

Հայասանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ

Ձեռքբերումների բաժին

Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ

Էլ-փոստ՝ asif@armeniasif.am

Հեռ: (+37410) 24 71 42